



Հ.Մ.Ը.Մ.



ԵՐՈՒՍԱՂԷՄ — ՀԱՅՅԱ

ԱՄՍՕՐԵԱՅ ԶՐՋԱԲԵՐԱԿԱՆ

ԹԻԻ 5-6

ՄԱՅԻՍ — ՅՈՒՆԻՍ

1938

ԵՐՈՒ ԽՕՍԶ


Մ Ե Ր Բ Ա Ժ Ի Ն Ը

Ժողովուրդ մըն ենք ցիր ու ցան, հալածական. բայց արհա- մարհեցելով մեր դժուարին կա- յութիւնը՝ հաւատքով փարած կը մնանք ազգային դոյութեան պահպանմանն Ունինք Հոյ ապ- բելու զօրաւոր սենյը և մեր անկախութեան տիրանալու խոր հաւատքը, որոնք կը զարգա- նան տարուէ տարի աւելի դի- տակից ըմբռնումով. սակայն այդ ըմբռնողութիւնը դատա- պարտուած է մնալու լոկ բաղ- ձանք մը՝ երբ անոր զուգահեռ չկայ գործնական ոգին, հաւա- քական գործակցութիւնը: Ապահովելու համար այդ և մանաւանդ զայն տեւականա- ջընելու, իսկական ոյժի մը վե- րածելու համար, պայման է

անհատին դատարարակութիւնը, որուն պէտք է յառի մեր ու- շադրութիւնը:

Անհատը պէտք է խորապէս ըմբռնէ թէ ինք մասնիկ մըն է հաւաքականութեան մէջ եւ իր նմաններուն ոյժերուն հա- մախմբումն ու համերաշխգոր- ծակցութիւնը կը կազմեն ոյժը, անխորատկելի պատուարը ա- մէն տեսակի փոթորիկներու դէմ: Այս մտայնութիւնը արդէն ինքնին ժխտումն է ետա- կանութեան որ մեծագոյն ազ- դակն է կարգապահական ոգիի զարգացման:

Հաւաքաբար գործելու տը- կարութիւնը և առհասարակ ան- կարգապահ ընթացքը մեր ամե- նէն ակնյայտ թերութիւննե-



րէն են, որ նոյնիսկ կարծես առածի կարգ անցած է թէ՛ մէկ Հայ տասը օտար կ'արժէ՛ առանձինն, իսկ տասը Հայ՝ հաւաքաբար, մէկ օտար չեն ար. ժեր, սա մասամբ մը կը բնորոշէ իրականութիւնը, բայց նոյն ատեն սխալ է օտարին կողմէ ըսուած այդ խօսքը տառացիօրէն վերագրել Հայ ժողովուրդին և իբր ճակատագրական ու անչնչելի մեղք մը ընդունիլ. մանաւանդ ներկայ արթնութեան շրջանին և իրապաշտ ժամանակին՝ այդ պիտի ըլլար միայն ճակատագրապաշտի և ստրկահոգիի դատողութիւն: Ա՛յո, թերութիւններ են, սակայն երբե՛ք անկարելի. ընդհակառակը շատ գիւրտ կարելի է դարմանել՝ երբ բժական դիր աշխատանք տարուի, վերոյիշեալ սկզբունքով, անհատին դաստիարակութիւնը:

Բարեբախտաբար կան երեւոյթներ, որոնք կը հաստատեն որ ընդունակ ենք հաւաքաբար նախանձելի գործեր տանելու: Ունինք հազուադիւր կազմակերպութիւններ, որոնք իրենց երկար տարիներու գոյութիւնը և ատոր համընթաց իրենց աստիճանական ուժեղացումը ա-

ռաւելաբար կը պարտին անհատին կարգապահական ոգիի գիտակցութեան, և որոնք պատկառանք կ'ազդեն և յոյս կը ներշնչեն նաւաբեկեալ ժողովուրդին: Այդ քիչերէն ըլլալու սահմանուած է և՛ Հայ Մարմնակրթ. Ընդհ. Միութիւնը, որ տակաւին նոր կը ստանայ իր ուրոյն դիմադիծը և մեզմէ իւրաքանչիւրը պատասխանատուութեան բաժին մը ունի իր ուսերուն վրայ զարգացնելու հաւաքական գործակցութեան ոգին, իսկ տարածելու և զօրացընելու համար այդ, ամէն մէկ Հ.Մ.Ը.Մ. ական հարկ է լուսակցի իր դերին և պատրաստէ իր անձը:

Հ.Մ.Ը.Մ. ը պարզ միութիւն մը չէ, ոչ ալ ժամանցի վայր՝ ու իբր այդ չէ որ կ'անգամակցինք անոր. այլ ան ունի որոշ առաքելութիւն Հայ կեանքին մէջ, միշտ ազգայնական գծով, և առողջ գատողութեամբ: Անցորդներ չենք հոն, այլ ուխտեալներ և կարգապահ զինուորներ, հաւատարիմ անոր դառանանքին, անոր իտէալին:

Այս գիտակցութեամբ միայն՝ Հ.Մ.Ը.Մ. ի դրօշին տակ,

կրնանք ծառայել զարգացնելու Հայ իրականութեան մէջ հաւաքական գործակցութեան, կարգապահութեան և հնազանդութեան ոգին:

Ազգային առողջութեան ընդհանուր գործին մէջ ա՛յս է բաժինը Հ. Մ. Ը. Մ. ին և Հ. Մ. Ը. Մ. ականին:

*

ՖՈՒԹՊՈՒ

ՊԼՅՐՈՒԹ ԸՆԴԴԵՄ ԵՐՈՒՍԱՂԵՄ

Տարիներու մեր փափաքը վերջապէս իրականացաւ: Ֆուտբոլի Ա. խումբը, այլ անդամներու ընկերակցութեամբ, Ապրիլ 22 ին գնաց Պէյրութ, մրցելու տեղւոյն բոլր մասնաճիւղի Ա. խումբին հետ: Մրցումը

տեղի ունեցաւ 24ին, Հ.Մ.Ը.Մ. ի դաշտին վրայ: Խաղի սկզբնաւորութեան մարզիկները՝ պահ մը լուռ կեցան Ապրիլեան Եղեռնի զոհերուն խնկելի յիշատակին: Տեղի ունեցաւ օրինակելի խաղարկութիւն մը, որը վերջացաւ Ե-



Պէյրութի և Երուսաղէմի Ֆուտբոլի միացեալ խումբերը

բուսաղէմի յաղթանակով (3:2),
իսկ Ապրիլ 23ին տեղի ունեցաւ
Պասքէթպուլի մրցումը. կրկին
Երուսաղէմը շահեցաւ (24-12):

Խաղերուն արդիւնքը չէ որ մեզ
կը խանդավառէ այնքան՝ որքան
իրարմէ հեռու երկու մասնաճիւ-
ղերու հանդիպումը, որ կը զօրա-

ցընէ բարոյական կապը և գործին
հանդէպ հետաքրքրութիւնը: Նման
հանդիպումներ կ'արթնցնեն նաև
հասարակութեան հետաքրքրու-
թիւնը Հ.Մ.Ը.Մ.ի շուրջ:

Մասնաճիւղս իր շնորհակալու-
թիւնը կը յայտնէ Պէյրութի եղ-
բայրական հոգածութեան համար:

Հ. Մ. Ը. Մ. — ՀԱՅՖԱ

Մեր նախորդ թղթակցութեամբ
խօսած էինք Ապրիլ եւ Մայիս ամիս-
ներու ընթացքին մեր ունենալիք գոր-
ծունէութեանց մասին: Ստորեւ կու-
տանք անոնց մանրամասնութիւնները:

ԱՆՈՒՄԲ

Մեր նախկին ակումբը չունե-
նալով անհրաժեշտ ընդարձակու-
թիւն, հարկադրուած էինք յաճախ
մեր հրապարակային արտայայ-
տութեանց եւ ներկայացումներուն
համար վարձել աւելի մեծ սրահ.
ներ, որոնք նիւթական նեղ դրու-
թեան կը մատնէին մեզ, և այդ
պատճառաւ ստիպուած էինք հը-
րաժարիլ շատ մը հրապարակա-
յին ձեռնարկներէ:

Ներկայիս ուրախ ենք յայտա-
բարելու որ, երկար և դժուարին
բանակցութիւններէ վերջ, յաջո-
ղեցանք վարձել նոր ակումբ մը,
որը անհամեմատօրէն մեծ է նախ.
կինէն և օժտուած ակումբի մը

համար պէտք եղած բոլոր յար-
մարութիւններով: Սակայն այս
բոլորը պիտի չբաւեր յաջողցնե-
լու մեր գործը, եթէ երբեք ան-
զամներու և համակիրներու առա-
տաճեռն նուէրներն ու ժրաջան
աշխատանքները չգային օժանդա-
կելու մեզ՝ ակումբի կահաւորման
կարևոր գործին մէջ: Արդ, շնոր-
հիւ այս օժանդակութեանց, կա-
րելի եղաւ շինել կարճ ժամանակի
մը ընթացքին, բեմ մը, և 150
նոր աթոռներ, որոնք առայժմ կը
գոհացնեն մեր պահանջները:

ՀԱՆԴԵՄՆԵՐ

Մայիս 7ի Շարաթ երեկոյեան
ժամը 8.30ին, տեղի ունեցաւ
Ապրիլեան Եղեռնի յուշատօնը, նո-
րավարձ ակումբին մէջ, ներկայու-
թեամբ հոծ բազմութեան մը:
Օրուայ նախագահը՝ Եղբ. Յով-
հաննէս Պետրոսեան, հանդէսը

բացուած յայտարարեց "Մեր Հայրենիք" ուլ, ապա հակիրճ կերպով բացատրելէ վերջ օրուայ նշանակութիւնը, անցաւ յայտագրի գործադրութեան: Եղան օրուայ պատշաճ արտասանութիւններ, մեներգներ, խմբերգներ, բանախօսութիւններ և կենդանի պատկեր մը: Զոյգ բանախօսները, Եղբայրներ Եղիշէ Մանուկեան, և Տօքթ. Ա. Մահսէրէճեան, լրիւ կերպով պատկերացրին թիւրք վայրագ ցեղին խժղժութիւնները, մասնաւորապէս ծանրացան Հայ ժողովուրդի և Հայաստանի ներկայ տագնապաւի կացութեան, ու կոչ ըրին երիտասարդութեան ամուր կռուելու Հայ ազատագրական դատին: Յաջողութեամբ արտասանեցին, Բ. Պիւլպիւլեան "Կիլիկիա մոլորներու վրայ" Դանիէլ Վարուժանէն, Հրանդ Զէյթունցեան "Ասացուածը," Կոստան Զարեանէն, և Մ. Տիշոյեան "Պարը" Սիամանթոյէն: Մեներգեցին Օր. Տ. Խաչատուրեան, Խ. Ճէվահիրճեան, և Մ. Զոպեան: Ներկայացուեցաւ Ա. Ահարոնեանի ուխտաւորը, որ պէս կենդանի պատկեր, Խ. Ճիվահիրճեանի և Բ. Պիւլպիւլեանի կողմէ, որը մեծ յուզում պատճառեց ներկաներուն: Ժամը 10,30ին Հանդէսը փակուեցաւ Տէր Կեցոյով:

Ամսոյս 9 Երկուշաբթի երեկոյեան ժամը 8 ին, տեղի ունեցաւ երկրորդ հաւաքոյթ մը, օգտուելով Պ. Գ. Գուտուլեանի ներկայութեան, ներկայ էին մօտաւորապէս 200 հանդիսականներ: Եղան մեներգներ, արտասանութիւններ, նուագ, բանախօսութիւն: Իրենց տպաւորիչ ու գեղեցիկ ձայներով մեներգեցին Օր. Տ. Խաչատուրեան Խ. Ճիվահիրճեան և Մ. Զոպեան, իսկ Եղբ. Խ. Ճիվահիրճեան արտասանեց "Երգիչին անէծքը". ապա բեմ հրաւիրուեցաւ օրուայ բանախօսը Պրն Գ. Գուտուլեան: Յարգելի Պարոնը մօտ մէկ ժամ տեղութեամբ խօսեցաւ Ապրիլեան Եղեռնի շուրջ և հրաւիրեց երիտասարդութիւնը վրիժառու ըլլալ, ու ջանալ սրբել այն սև առատը որ քսուեցաւ Հայուն պայծառ ճակտին, արհաւիրքի օրերուն: Հանդէսը զոցելէ առաջ օրուայ նախագահը Եղբ. Յ. Պետրոսեան, խօսք անելով ըսաւ. Ապրիլ 24ը թիւրքին կարծիքով մեր մահուան թուականն է, մենք պէտք է ջանանք որ ան մեր յարութեան թուականը ըլլայ: Հանդէսը փակուեցաւ "Յառաջ Նահատակ" ուլ:

Յուլիս 4ին, Միութեանս ակումբին մէջ տօնուեցաւ Հայաստանի Անկախութեան 20ամեակը, հոծ

բազմութեան մը ներկայութեան:
 Օրուայ բանախօսներն էին Մ.
 Մարութեան և Փրով Տ. Լիւլէճ.
 եան. խօսք առաւ նաև Տօքթ.
 Մահսէրէճեան:
 ԹԱՏԵՐԱԿԱՆ

Վարդանանց պատերազմի ներ-
 կայացումը, որ երկար ժամանա-
 կէ ի վեր յետաձգուած էր, տեղի
 ունեցաւ Մայիս 21ին. պէտք ե-
 դած ջանքերը թափուած էին յա-
 ջող կերպով ներկայացնելու ազ-
 գային այս մեծ տոհմը:

ՄԱՐՋԱԿԱՆ

Մարզական կեանքը օր ըստ
 օրէ յառաջդիմութեան վրայ է.
 Թէև ֆութպոլի մրցումներ չունե-
 ցանք այս ամիս՝ բայց փորձերը
 կանոնաւոր ընթացան, և մերմար-
 զիկներուն մէջ եղած յառաջդի-
 մութիւնը նկատելի է: Վերջերս
 կազմեցինք մեր երկրորդ խումբը,
 որ նոյնպէս մեծ եռանդով իր փոր-
 ձերը կը կատարէ:

Հ. Ա.

.....
 Եղբ. Տօքթ Արամ Մահսէրէճեան
 (Հայֆայի մասնաճիւղի Պատ. Նախ.)
 Ընդ
 Օր. Լիժի Գէորգեան

.....
 Եղբ. Մկրտիչ Տիշոյան
 (Հայֆայի մասնաճիւղի Թատր. Յանձ. Պետ.)
 Ընդ
 Օր. Վ. Նիկողոսեան

 Խօսեցեալը

ՄԱՐՋԱԿԱՆ .

ԵՐՈՒՍԱՂՅՄ

Ֆ Ո Ւ Թ Պ Ո Ղ

Մայիս 8ին Ա. խումբը մրցե-
 ցաւ Blackwatch ի հետ, Ա.
 կիսախաղին Անգլիացիք յաղ-
 թական էին 2 կօլով, Բ. կիսա-
 խաղին մեր խումբը նշանակեց 2
 կօլ, խաղը վերջացաւ հաւասար
 արդիւնքով (2-2): Անցեալ ամիս
 մեր խումբը պարտուած էր նոյն
 խումբէն 5-1 ով:

Նոյն օրը, Ա. խումբի մրցումէն
 առաջ, Պահեստի խումբը խաղցաւ
 R.A.M.C. ի դէմ, որ պարտը-
 ւեցաւ 2-1 ով: Պահեստին կը ճակա-
 տէր իրմէ բաւական զօրաւոր խում-
 բի մը դէմ. խումբը հաւաքա-
 բար ունեցաւ գնահատելի խաղար-
 կութիւն:

Առհասարակ զիտելի է խում-
 բերուն միահամուր յարձակողա-
 կանի տկարութիւնը. յառաջապահ-
 ները պէտք է վարժուին ուղիղ և
 զօրաւոր հարուածներու հակառա-
 կորդի բերդին առջև, այս երկու
 կէտերու տկարութիւնը պատճառ
 կ'ըլլայ շատ մը կէտերու կորուս-
 տին: Յաջորդիւ աւելի մանրա-
 մասն կ'անդրադառնանք թերու-
 թիւններու մասին, որոնց դարմա-
 նումով աւելի արժէք կը ստանան
 և՛ բարեմասնութիւնները:

Պ Ա Ս Կ Է Թ Պ Ո Ւ

Մայիս 12 քաղաքս ժամա-
նեց Գահիրէի Y. M. C. A. ի
Պ ա ս ք է Թ պ ո լ ի խ ու մ բ բ ,
մրցումներ կատարելու տեղական
Խումբերու հետ՝ որոնց մէջեւ
Հ.Մ.Բ.Մ. ք: Իր յաջորդական 5
մրցումներուն մէջ, Գահիրէի խում-
բը յաղթական ելաւ Մրցումները
տունն հետեւեալ արդիւնքները:-

Ա. Երուսաղէմի Y.M.C.A. ի
դէմ, (36-24): Օրթոտոքս Ակում-
բին դէմ, (38-18): Գ. Հ.Մ.Բ.Մ. ի
դէմ, (29-24): Գ. դարձեալ Երու-
սաղէմի Y.M.C.A. ի դէմ, (42-
28): Ե. Թէլ-Ավիվի "Հիթ քատ-
մատ"ին դէմ, (45-21): Կէտերու
համեմատութենէն կը տեսնուի որ
մեր խումբը ամէնէն յաջողը հան-
դիսացած է. դժգոհ չենք այս ար-
դիւնքէն, յաղթանակ չէինք ակըն-
կալէր, կը զգայինք Գահիրէցի-
ներու գերակայութիւնը: Այս կա-
տարեալ բարոյական յաղթանակ
մըն է մեզի համար, մանաւանդ
յաչս տեղական միւս խումբերուն,
որոնք արհամարհանքով կը դի-
տէին Հայ խումբը:

Պասքէթի մեր խումբը հազիւ
տարուայ մը կեանք ունի, տղոց
յաջող խաղարկութիւնը նախանձը
զրգրեցին միւսներուն: Խումբը
առաւելաբար երկու բանի կը

պարտի իր յաջողութիւնը. առա-
ջին՝ կրցած էր նախորդ մրցում-
ներուն լաւ ըմբռնել հակառա-
կորդ խումբին՝ խաղալու կերպը,
երկրորդ՝ զօրաւոր նախանձախընդ-
րութիւն մը կար անպայման
յաջող դուրս գալու, նոյն իսկ
յաղթելու վճռականութեամբ, Հայ
անունը բարձր պահելու այդ օտար
շրջապատին մէջ: Վերջապէս ար-
դիւնքը յաղթահարիչ էր անոնց
համար՝ որոնք Հ.Մ.Բ.Մ.ին չարա-
չար պարտութիւնը կը բազմային:
Յետասպահներէն Յովակիմին ըս-
տիպողաբար խաղէն քաշուիլը
վնասակար եղաւ խումբին. հաւա-
նական է աւելի յաջող դուրս
գային մերինները որ մինչև այդ
կէտերու առաւելութիւնը իրենց
կողմն էր: Մասնաւորաբար Վահէ
Ղազէրեանին ճկուն խաղարկու-
թիւնը գովելի էր*:

Ըստ Գահիրէցիներուն ամէնէն
հաճելի խաղը ունեցած են Հ.Մ.
Բ.Մ. ի հետ:

Բ Ի Ն Կ - Բ Ո Ն Կ

Մայիս 15ին, տեղի ունեցաւ
Բ ի ն կ - Բ ո ն կ ի մըրցումներ
Եաֆայի " Հայկաշէն " միու-
թեան և մասնաճիւղիս խաղս.

* Գահիրէցիներու խումբին մէջ Հայ մը
կար Նուպար Անդրանիկեան անունով:

ցողներուն միջև։ Շատ հետաքրքրական անցան մրցումները, կրկիկ բազմութիւն մը ներկայ էր։ Իւրաքանչիւր կողմէն կը մասնակցէին վեցական հոգի։ "Հայկաշէն"ը տարաւ յաղթանակը։ Եաֆացիները աւելի փորձառու խաղարկութիւն ցուցուցին։ Մասնաճիւղս տրամադրած էր բաժակ մը օրուայ ախոյեանին, որուն արժանացաւ Պր. Միսաք Աթիբեան իր ճարպիկ խաղարկութեամբ։ Այս առթիւ Եղբ. Ա. Բախիսարեան նուիրած էր բաժակ մը տրուելու յաղթական կողմին, որուն արժանացաւ "Հայկաշէն"ը։ Այս առաջին կազմակերպուած մրցումն էր երկու քաղաքներու միջև, որը պիտի շարունակուի "Բախիսարեան" բաժակի վրայ։

S Ո Ր Ք

Եղբ. Կարօ Մարտիրոսեան
(Երուսաղէմի մասնաճիւղի վարիչ Սկաուտ)
ընդ

Օր. Վարդուհի Ստամպուլեան

ԱՄՈՒՍՆԱՅԵԱԼՔ

* * *

ԻՕՍԵՅԵԱԼՔ

Եղբ. Արամ Այվազեան
(Երուսաղէմի մասնաճիւղի ֆոխ-Ասենապետ)
ընդ

Օր. Աղանի Գալայճեան

Յունաստանի ՇՐԶ. Վարչութենէն կը գրեն մեզի։

Մայիսին տեղի ունեցան Համահեւ. լենական, հեծելանւորական մրցումներ, որոնց մէջ Հ.Մ.Բ.Մ. ի հեծելանւորներու խումբը հակառակ մէկ տարուայ սկսնակ խումբ մը ԸԼԼԱԼուն, յաջողեցաւ 4րդ դիրք ապահովել 4, 3200 Մ. Գրօշարչաւին մէջ։

Յունաստանի շրջանը ունի 10 մասնաճիւղ զանազան քաղաքներու մէջ, որոնք կը գործեն ներդաշնակ։

Յունաստանի Կեդր. Վարչութիւնը ձեւնարկած է մօտ ապագային, հանդիպում մը կատարել «Եգիպտոսի, Սուրիոյ, Լիբանանի եւ Պաղեստինի» շրջաններուն հետ, կազմակերպելով Ֆութպոլի խաղեր Եղբ. Գանիէլ Գանիէլեանի գլխաւորութեամբ։

Կը խնդրուի բոլոր շրջաններէն լուրջ աշխատանք տանիլ այս ձեռնարկին յաջողութեան համար։

Անճ հանցքով կը հրատարակենք վարի տողերը առնելով «Հերկ»ի Դեկտ.ի Թիւն։

« . . . Հ.Մ.Բ.Մ. Ը մեր զաղութիւն երկրորդ դպրոցն է ուր մարմնակրթականքին հետ միասին, Հայկական մթնոլորտի մը մէջ, պատանիները կը ստանան բարոյական դաստիարակութիւն մը ճիշդ իրենց այն տարիքին մէջ երբ աւելի քան երբեք վտանգուած է ե՛ւ իրենց մարմինը, ե՛ւ բարոյականը եւ մանաւանդ իրենց Հայութիւնը։

Ազգապահպանման գործին մէջ Հ.Մ.Բ.Մ. ի կատարած դերը ամէնէն հիմնական և անփոխարինելի օժանդակութիւններէն մին է։

Միայն թէ ոգին պէտք է խորացնել ու գործը ընդարձակել և վերածել ազգային մեծ շարժման մը չափերուն։ »

ՎԱՐՉԱԿԱՆ

Կամքի անկախ պատճարներով ստիպուեցանք Մայիսի և Յունիսի թիւերը միացեալ հրատարակ հանել: Պիտի ստիպուինք Յուլիսի և Օգոստոսի թիւերն ալ միասին հրատարակել:

Սոյն միացեալ թիւը բացառաբար նուիրուած պիտի ըլլայ սկաուտներուն եւ պիտի պարունակէ միայն սկաուտական գրութիւններ: Այս բացառիկ թիւը պիտի ըլլայ պատկերազարդ և 16 էջ զին՝ 2 Պ. Գ.:

Երուսաղէմի մասնաճիւղը Հայ Կրթ. "Սիոն" միութեան հետ նախաձեռնեց "Ապրիլ 24" սզահանդէսը ինչպէս նաև "Մայիս 28" ի տօնակատարութիւնը:

Առաջինը տեղի ունիցաւ միութեան ակումբին մէջ. խօսեցաւ Պրն. Գ. Գ. Գուտուլեան, երկրորդը տեղի ունեցաւ Զրէրներու սրահին մէջ, խօսեցան Մ. Մստութեան և Փրօֆ. Տ. Լիւլէճեան:

ԱՆԴԱՄԱՏԵՐՆԵՐ

Անդամատերները հասած են, իւրաքանչիւր անդամ պարտի ներկայացնել երեք փոքր նկարներ եւ ստանալ անդամատեր. կը խնդրուի չթերանալ:

Գլմեկ Վարչութեան:

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳ

Հ. Մ. Ը. Մ.ի Ամսօրեայ Շրջաբերականին ինչպէս նաև Երուսաղէմի մասնաճիւղին վերաբերեալ ամէն տեսակ առաջում և թրղ-թակցութիւն պէտք է ըլլայ հետեւեալ հասցէին.

"HOMENETMEN" Jerusalem Branch
c/o LEVON H. KESHISHIAN
P.O.B. 246, Jerusalem, Palestine

ՍՏԱՅԱՆՔ

ՃԵՄ-ԱՐԻ, Ա. Տարի Թիւ 1,2,4,5 (Յուն-Մայիս) 1938 հասցէ՝ N. Tcholakian
127, Rue Wadi-Abou Jémil, Beyrouth.

ՇԵՐԿ, Ա Տարի Թիւ 11, 12 Ապրիլ Մայիս հասցէ՝ Կ. Պալմեան Str Episcopul Radu
8, Bucarest: 3 (România) Տար. բաժ. 25 ֆրկ.

Z.Մ.Ը.Մ.ի Շեխոպոլտոյ մասնաճիւղին
Z.Մ.Ը.Մ.ի Եգիպտոսի Երջանի 1936 Տարւոյ շրեղ պատի օրացոյցը:

Z.Մ.Ը.Մ.ի Երազիբ կանոնագիրք, հրատ.
Z.Մ.Ը.Մ.ի Եգիպտոսի շրջանի 1929

Z.Մ.Ը.Մ. Պուլկարիոյ Երջ. Վարչութեանն,
Վառնա:

Z.Մ.Ը.Մ.ի Պուլկարիոյ Երջանի 1938 տարւոյ շրեղ պատի օրացոյցը:

ՌԱԶՄԻԿ, Բ. Տարի Թիւ 8-27, նուէր եղբայր Արշակ Զագեեանն, Վառնա

Գաեիբէի հայ Արիներու Միութեանն Ներսէս Օ. Խանճեանի միջոցաւ:

ZԱՅ ԱՐԻ, Դ Տարի 1934-1935
ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐ ZԱՅ ԱՐԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ Փարիզ 1937

Եղբայր Կարպիս Զատրճեանն, Շեխոպոլիս ՊԱՍՔԵԹՊՈԼԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՔՆԵՐ:
(1932-36) — Badrig Benson, Գաեիբէ 1936

ՇՔԵՂ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Հայ բեմի տաղանդաւոր ներկայացուցիչ
Գերասան Մ. ՄԱՐՈՒԹԵԱՆԻ կողմէ
(Մասնակցութեամբ Տիկ. Ռ. ՄԱՐՈՒԹԵԱՆԻ)
և օժանդակութեամբ

Հ. Մ. Ը. Մ. Ի Երուսաղէմի Մասնաճիւղին
ու քաղաքիս լաւագոյն սիրողներուն

կը ներկայացուի իտալացի հռչակաւոր թատերագիր
ՋԻԱՔՕՄԷԹԹԻԻ

“ՔՕՐՐԱՏՕ”


կամ

“ՈՃՐԱԳՈՐԾԻ ԸՆՏԱՆԻՔԸ”
Յուզիչ տւամբ 5 արար

“IN COLD BLOOD”

Տւամբ՝ մէկ արար
(Անգլերէն)

Հայկական եւ կովկասեան Պարեր
Տիկ. Ռ. ՄԱՐՈՒԹԵԱՆԻ կողմէ
մասնակցութեամբ
Հ. Մ. Ը. Մ. Ի Պարի խումբի



Մ. Մարումեանը “Զորրատո” ի դերին մ.թ

2- Յուլիս 1938, Շաբաթ երեկոյեան ժամը ճիշդ 8,30 ին,
Y. M. C. A. ի մեծ սրահին մէջ:

Տոմսերու գիններն են՝ 149, 99, 49 միլ:
Ստանալ՝ “Սիտն - Հ. Մ. Ը. Մ. Ի” ակումբին եւ Y. M. C. A. Կն:
Իսկ ներկայացման օրը՝ կիշին:

Վարագոյրը կը բացուի ճիշդ օրոշեալ ժամուն: